Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հիմնական դպրոց

Տնօրեն՝ Ն.Տողանյան

Թեմատիկ պլանավորում

«Երաժշտություն»

5-7-րդ դասարաններ

2023-2024 Ուստարի

Ուսուցիչ՝ Ազնիվ Բարեղամյան

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ

ՆՈՐՈՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ 7

ՆՅՈՒԹԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Առարկայի փորձագետ՝ Վարդուհի Բաբայան

2021

Թեմատիկ պլան / առաջին կիսամյակ

Դաս N	Թեմա	Նպատակ	Վերջնարդյունքներ
Դաս 1-3	Հայ ազգային երգեր ու պարեր. Ունկնդրում՝ Գյովնդ, Վերվերի:	Ազգային երգերի, պարերի և պարերգերի ծագումնաբանության և զարգացման մասին գիտելիքների ձևավորում:	Ուսումնասիրի ազգային երգ ու պարի ծագումնաբանությունը և զարգացումը, հանդես գա հետազոտական կամ նախագծային աշխատանքներով:
Դաս 4-6	Պարերգ. Ունկնդրման նյութ՝ «Մեր տան հիտև», պարային խմբատեսակ «Վերվերի»: Ունկնդրում՝ տարբեր ազգերի պարերգերի ուսումնասիրում և համեմատում. Թամզարա, Փափուռի:	Ծանոթացում ազգային երգ ու պարի նմուշներից յուրաքանչյուրի տարածաշրջանային պատկանելությանն ու խորհուրդներին, կատարման տեղին ու ժամանակին:	Մեկնաբանի հանրամատչելի երաժշտության առանձնահատկությունները: Ճանաչի և ներկայացնի՝ ինչ է պարերգը: Ներկայացնի իր անհատական երաժշտական տպավորությունները, հուզական արձագանքը բանավոր ելույթների, էսսեների կամ շնորհանդեսների միջոցով:
Դաս 7-9	Աշխատանքային երգեր. Երգի ուսուցում՝ Խնոցի, Քաղհան, Ճախարակի երգը, Էրիշտայի երգը, Հոլ արա, եզո ջան:	Աշխատանքային երգերի միջոցով սովորողների հայեցի դաստիարակության, ազգային ինքնության, ինքնագիտակցության, ինքնաճանաչողության և ի վերջո հայ քաղաքացի դաստիարակելու գործի կարևորումը:	Նշված երգի համար ստեղծի թատերականացված երաժշտական կերպար: Ներկայացնի ունկնդրած երգերում իր ընկալած կերպարները:
Դաս 10-11	Հայ ավանդական երգի ճյուղերը՝ գեղջկական, գուսանաաշուղական, քաղաքային. Կանչե, կռունկ, Քելեր-ցոլե, Ալագյազ… Լուսնակ գիշեր, Մայր Արաքսի ափերով, Քուն եղիր, բալաս:	Թատերականացված գործողություններում ազգային ավանդական մշակույթի տեսակների շաղկապվածությունն ու նրանց ներդաշնակությունը հասկանալու հմտությունների ձևավորում:	Բացատրի հայ ավանդական երաժշտարվեստի դերը գեղարվեստական մշակույթի մեջ, ներկայացնի իր երաժշտական նախասիրությունները:

Դաս 12-13	Ռազմի և հայրենասիրական երգեր և պարեր՝ Ձայն մը հնչեց, Զարթնիր լաո, Կովկասի քաջեր, Ռազմական և մեհենական պարեր. Յարխուշտա, Կառնո քոչարի, Շատախի…	Ազգային մշակույթի մեջ ազգային ազատագրական պայքարի «հնչողության» ընկալում և կարևորում, դրանց կատարման առանձնահատկությունների մեկնաբանման հմտությունների ձևավորում:	Կատարի ռազմական երգերն ու պարերը կերպարային և արտահայտիչ՝ հաղորդելով ազգային նկարագիր:
Դաս 14-15	Կատակերգեր. Կատարում, մեկնաբանում, բեմադրում: Գացեք-տեսեք, Դու էլ գիտես, թե…	Կատակերգերի, պարերգերի, ազգային երգ ու պարի միջոցով սեփական ժողովրդի հույզերի և ապրումների ընկալման հմտությունների ձևավորում:	Ներկայացնի ազգային կատակերգերը կերպարային և արտահայտիչ՝ հաղորդելով ազգային ծեսերի գաղափարախոսությունը:
Դաս 16	Թեմայի ամփոփում. դաս-ներկայացում: Հայ և օտարազգի երգերի և պարերի ներկայացում:	Հայ ազգային արվեստի ու ավանդույթների արժևորում:	**Արժևորի** երաժշտությունը, որպես կյանքի և շրջակա միջավայրի գեղարվեստական արտացոլան միջոց, կարևորի ազգային ավանդույթները:

Թեմատիկ պլան / Երկրորդ կիսամյակ

Դաս N	Թեմա	Նպատակ	Վերջնարդյունքներ
Դաս 1-2	**Գուսանա-աշուղական արվեստ:** Սայաթ-Նովա «Քամանչա»: «Սայաթ-Նովա» աշուղական երգի համույթի տեսանյութերի դիտում: Դիտում՝ հատվածներ Ալ. Հարությունյանի «Սայաթ Նովա» օպերայից:	Միջնադարյան գուսանների և 17-18-րդ դարերում ստեղծված և մինչև այսօր զարգացում ապրող աշուղական արվեստի մասին ծանոթացում:	**Ներկայացնի** հայ գուսանա-աշուղական արվեստի ձևավորման և զարգացման պատմության: Կատարի Սայաթ-Նովայի «Քամանչա» երգը, և մեկնաբանի իր կատարումը:
Դաս 3	Ջիվանի Ունկնդրում, երգեցողություն՝ «Ես մի ծառ եմ ծիրանի», «Ձախորդ օրեր»:	Աշուղական արվեստի հայ նշանավոր ներկայացուցիչների մասին գիտելիքների ձևավորում:	**Ճանաչի** աշուղ Ջիվանուն, որպես հայ աշուղական դպրոցի հիմնադիր: **Կատարի** երգը մաքուր ինտոնացիայով և հստակ ռիթմով՝ մեկնաբանելով խոսքերի փոխաբերական իմաստը: **Ներկայացնի** հետազոտական աշխատանք հայ գուսանա-աշուղական երգարվեստի վերաբերյալ:
Դաս 4-5	Աշուղական արվեստի հայ նշանավոր ներկայացուցիչներ՝ Շերամ, Հավասի, Աշոտ և այլոք: Գուսանա-աշուղական երգերի ունկնդրում.	Աշուղական երգերը ունկնդրելու, ճանաչելու, գնահատելու և պատշաճ ձևով կատարելու հմտությունների ձևավորում	**Ճանաչի,** կատարի, գնահատի աշուղական երգերը: **Վերլուծի** երաժշտական ստեղծագործությունը, արտահայտի սեփական տեսակետը հեղինակի գաղափարի վերաբերյալ:

			Արժևորի հայ աշուղական արվեստը:

Դաս 6	Դաս-համերգ՝ հայ աշուղական արվեստ:	Հայ աշուղական արվեստի արժևորում:	Երգը **կատարի** մաքուր ինտոնացիայով և հստակ ռիթմով՝ մեկնաբանելով խոսքերի փոխաբերական իմաստը: **Ճանաչի, գնահատի** աշուղական երգերը, **արժևոր**ի հայ աշուղական արվեստը:
Դաս 7	**Ժամանակակից հայ երգարվեստ:** Ժամանակակից հայ կոմպոզիտորների կյանքն ու ստեղծագործական գործունեությունը:	Ծանոթացում հայ ժամանակակից կոմպոզիտորների երգարվեստին. Ա. Կարապետյան, Գ. Չթչյան, Ս. Պասկևիչյան, Վլ. Բալյան, Ա. Շահզադեյան, Ռ. Հախվերդյան, Ա. Գրիգորյան, Ա.Սաթյան, Ա. Լուսինյան, Մ. Վարդազարյան, Ռ. Պետրոսյան, Ստ. Լուսիկյան…	**Մեկնաբանի** հանրամատչելի երաժշտության առանձնահատկությունները, **թվարկի** ժամանակակից տարբեր հեղինակների երաժշտական ոճի, ձեռագրի առանձնահատկությունները:
Դաս 8	Ռոբերտ Պետրոսյան. Ունկնդրում՝ «Պատգամ որդուս», «Իմ ուսուցիչ»… Ուսուցում՝ «Երկիր հայրենի», «Սոս շատախոս»…	Ժամանակակից հայ կոմպոզիտորների կյանքի ու ստեղծագործական գործունեության/երգարվեստի/ մասին գիտելիքների ձևավորում:	**Ներկայացնի** նույն երաժշտական գաղափարի մեկնաբանությունների առանձնահատկությունները տարբեր կոմպոզիտորների կողմից:
Դաս 9	Տիգրան Մանսուրյան Ունկնդրում՝ հատվածային. «Մայրամուտի երգեր» ըստ Հ. Սահյանի,	Հայ ժամանակակից երգարվեստի նմուշների կատարման և մեկնաբանման հմտությունների ձևավորում:	Իր անհատական երաժշտական տպավորությունները, հուզական արձագանքը **ներկայացնի** բանավոր ելույթների միջոցով, իսկ կոմպոզիտորների ստեղ-

	«Երկիր Նաիրի» ըստ Ե. Չարենցի, «Գարնան երգեր» ըստ Հ. Թումանյանի: Մանկական երգերի ուսուցում՝ «Հովիկ»:		ծագործական գործունեությունը՝ էսսեների կամ շնորհանդեսների միջոցով: Ներկայացման ընթացքում **օգտագործի** արվեստի մյուս ճյուղերի հնարավորությունները:
Դաս 10	Ռոբերտ Ամիրխանյան Ունկնդրում՝ «Կարմիր ծաղիկ մը գարունի», «Հայի աչեր», «Երազ իմ երկիր»…	Ամիրխանյանի ունկնդրած երգարվեստի ժանրային, թեմատիկ վերլուծության հմությունների ձևավորում: Հայ ժամանակակից երգարվեստի գնահատում և արժևորում:	**Կատարի** ժամանակակից հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները:
Դաս 11	Ստեփան Շաքարյան Ուսուցում՝ «Մուշ-Մուշ», «3 լոբի»… Ունկնդրում՝ ջազային-էստրադային երգեր՝ «Ծիածան»:	Հայ ժամանակակից կոմպոզիտորների՝ նույն թեմայով կամ ժանրում գրած երգերի մասին ուսումնասիրությունների ամփոփում:	**Արժևորի** երաժշտությունը, որպես կյանքի և շրջակա միջավայրի գեղարվեստական արտացոլան միջոց, արժևորի ժամանակակից երգարվեստը:
Դաս 12	Արթուր Գրիգորյան. Ունկնդրում՝ «Արցախ», «Հայ, իմ աշխարհ», Ուսուցում՝ «Նոր տարի»:	Հետազոտական աշխատանքների կատարում, նախասիրությունների ձևավորում, փոխանակում: Նախընտրած երգի գրաֆիկական վերլուծության կատարում:	**Փորձի ստեղծել** որևէ ժողովրդական երգի ժամանակակից մշակում՝ օգտվելով նորագույն համակարգչային ծրագրերից և կատարի այն: **Ճանաչի** ժամանակակից կոմպոզիտորներին՝ ըստ հնչողության և ձեռագրի:
Դաս 13	Սասուն Պասկևիչյան. Ուսուցում՝ «Հայոց տառեր»: Ունկնդրում՝ «Հայր իմ», «Ներիր ինձ, մայրիկ», «Մայրս»…	Հայ ժամանակակից երգարվեստի գնահատում և արժևորում: Պասկևիչյանի երգարվեստի ժանրային, թեմատիկ վերլուծություն՝ ըստ ունկնդրած երգերի:	**Արժևորի** երաժշտությունը, որպես կյանքի կարևոր և զգացական երևույթների արտահայտում, արժևորի մարդուն, ծնողին և արժեհամակարգ ձևավորող ժամանակակից երգարվեստը:

Դաս 14	Մարտին Վարդազարյան, Լևոն Մալխասյան… Ունկնդրում՝ «Այս ինչ կատարվեց», «Թզուկների երգը»: Ուսուցում՝ «Հեքիաթային ճանապարհ»…	Հայ ժամանակակից ջազային երգարվեստի ճանաչում, գնահատում և արժևորում: Ժամանակակից հայ ջազային երաժիշտ-երգահանների արվեստի ժանրային, թեմատիկ վերլուծություն՝ ըստ ունկնդրած նյութերի…	**Մեկնաբանի, ներկայացնի** հայ ջազային երաժիշտ-երգահանների արվեստը, նրա առանձնահատկությունները: **Ներկայացնի** նախընտրած ստեղծագործությունը՝ մաքուր և արտահայտիչ կատարմամբ:
Դաս 15	**Դասական հանրամատչելի երաժշտության դերը գեղարվեստական մշակույթի մեջ:**	Դասական երաժշտության հանրամատչելի լինելու մասին պատկերացում, հետազոտական աշխատանքների միջոցով նախասիրությունների ձևավորում, մտքերի փոխանակում:	**Մեկնաբանի, ներկայացնի** դասական հանրամատչելի երաժշտության առանձնահատկությունները: Ամփոփ **ներկայացնի** նախընտրած ստեղծագործությունը և մեկնաբանի:
Դաս 16	Վ.Ա. Մոցարտ. Ունկնդրում՝ «Գիշերային փոքրիկ serենադ», «Ռեքվիեմ», հատված 40-րդ սիմֆոնիայից…	Դասական հանրամատչելի երաժշտության զանազան կիրառումների միջոցով գեղագիտական ճաշակի ձևավորում:	**Բացատրի** դասական հանրամատչելի երաժշտարվեստի դերը գեղարվեստական մշակույթի մեջ և **ներկայացնի** իր երաժշտական նախասիրությունները:
Դաս 17	Է. Գրիգ. «Պեր Գյունտ» սյուիտ. Առավոտ, Անիտրայի պարը, Լեռնային արքայի քարանձավում…	Դասական արվեստի հանրամատչելի գլուխգործոցների ճանաչում, սեփական ճաշակի ընկալում և ձևավորում:	**Ունկնդրի, վերլուծի** և իր անձնական երաժշտական տպավորությունները, հուզական արձագանքը **ներկայացնի** բանավոր ելույթների, էսսեների կամ շնորհանդեսների միջոցով:
Դաս 18	Ֆ. Մենդելսոն. Ունկնդրում՝ «Հարսանեկան քայլերգ»:	Դասական հանրամատչելի երաժշտության բազում նմուշներ լսելու կարողություն, դրանց արդիականու-	**Մեկնաբանի,** դասական հանրամատչելի երաժշտության կոնկրետ նմուշի ժամանակագրական կապը արդի իրա-

		թյունը և ժամանակի մեջ հարատևելու ընկալում:	կանության հետ, **ներկայացնի ներկայացնի** նոր տեխնոլոգիաների միջոցով, օգտագործելով արվեստի մյուս ճյուղերի հնարավորությունները: